

Հաստատված է

Հասարակագիտական առարկաների և
հոգեբանության ամբիոնի _____.2017թ.
նիստում (արձ. թիվ ____)

Ամբիոնի պետ _____ Մ.Նազարյան
_____.2017թ.

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ	Իրավունքի փիլիսոփայություն
ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ	
ՖԱԿՈՒԼՏԵՏ	ՀՀ ոստ. կրթահամալիրի ակադեմիա, մագիստրատուրա
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ	Իրավագիտություն
ԱՍԲԻՈՆ	Հասարակագիտական առարկաների և հոգեբանության ամբիոն
ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ	Մ.Նազարյան (փ.գ.թ.) E-mail: mambre.nazaryan.police@gmail.com հեռ. 091 49 66 16
ՈՒՍ.ՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ	1-ին կուրս, 1-ին կիսամյակ
ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ	մագիստրոս

ԿՐԵԴԻՏՆԵՐ	3 (երեք)
ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ	<p>«Իրավունքի փիլիսոփայություն» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 12 ժամ լսարանային, 12 ժամ դասախոսություն:</p> <p>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված է 78 ժամ, որի ընթացքում սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարք հանձնելով:</p>
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐ	<p>Դասընթացը կառուցվում է «Փիլիսոփայություն» դասընթացի իմացության վրա:</p>
ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	<p>«Իրավունքի փիլիսոփայություն» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են իրավունքի փիլիսոփայության հասկացությունը, առարկան, համակարգը, խնդիրները, սկզբունքները, հիմնախնդիրները:</p>
ՆՊԱՏԱԿ	<p>Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ և ձևավորել կարողություններ իրավունքի փիլիսոփայության հասկացության, առարկայի, համակարգի, խնդիրների, սկզբունքների վերաբերյալ: Դասընթացի նպատակն է ուսումնասիրել իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրները, սովորողներին ներկայացնել իրավունքի փիլիսոփայության հիմնական հարցադրումները և իրավունքի փիլիսոփայության մեջ դրանց առաջադրված լուծումները:</p> <p>Դասընթացի խնդիրներն են՝</p> <ul style="list-style-type: none"> • սովորողների մոտ ձևավորել ընդհանուր պատկերացում իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրների մասին • ներկայացնել իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրների հայեցակարգը • ներկայացնել իրավունքի փիլիսոփայության զարգացման փուլերը • վերլուծել իրավունքի փիլիսոփայության զարգացման փուլերի հաջորդականությունը • հատուկ ուշադրություն դարձնել 20-րդ դարի իրավունքի փիլիսոփայության հիմնախնդիրներին
ԽՆԴԻՐՆԵՐ	

<p>ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ</p> <p><i>Կարողանա՝</i></p>	<ul style="list-style-type: none"> • տեղյակ լինել իրավունքի փիլիսոփայության պատմական հարցադրումներին • տեղյակ լինել իրավունքի ժամանակակից փիլիսոփայության հիմնական ուղղություններին • պատկերացում կազմել իրավունքի գոյաբանության, իրավունքի իմացաբանության և իրավունքի արժեքաբանության հիմնախնդիրների վերաբերյալ
-------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	
Հիմնական	<ol style="list-style-type: none"> 1. Ամբիոնի կողմից մշակված դասախոսություններ 2. Нерсесянц В.С. Философия права., м., 1997
Լրացուցիչ	<ol style="list-style-type: none"> 1. Բուրժուական փիլիսոփայությունը իմպերիալիզմի նախօրյակին և սկզբին., Ե.,1981 2. Ժամանակակից բուրժուական փիլիսոփայություն., Ե.,1983 3. Антология мировой философии в 4-х томах., М.,1971

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ ԵՎ ԿՇԻՌ	Ստուգաք (ստուգված, չստուգված)
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ	<p>Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:</p> <p>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:</p> <p>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝</p> <p>ա) «Գերազանց», եթե ունկնդիրը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ուստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ</p>

	<p>ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.</p> <p>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.</p> <p>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.</p> <p>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները:</p>
<p>ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ</p>	
<p>Ներկայություն</p> <p>Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ</p> <p>Ինքնուրույն և գործնական աշխատանքներ</p>	<p>Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին:</p> <p>Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկընդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը:</p> <p>Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր:</p> <p>Ինքնուրույն աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել դրանք նշված ժամանակահատվածում: Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի:</p>

ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՂՄԱՆ ՔԱՐՏԵԶ

Թեմա 1	
Իրավունքի փիլիսոփայության առարկան և խնդիրները : Իրավունքի էությունը և հասկացությունը	
(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցերը	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Իրավունքի իմաստը, էությունն ու հասկացությունը: 2. Իրավունքի դերը և նշանակությունը հասարակական կյանքում: 3. Իրավունքի փիլիսոփայությունը գիտությունների համակարգում: 4. Իրավունքի փիլիսոփայության Հուգոյի և Հեգելի ըմբռնումների համեմատական վերլուծությունը: 5. Իրավունքի դոգմատիկայի, իրավունքի արժեքաբանության և իրավունքի պատմության համադրությունը: 6. Իրավունքը որպես ձևական հավասարություն: 7. Իրավունքը որպես ազատություն: Իրավունքը որպես արդարություն: 8. Իրավունքի բնաիրավական և լեգիտտական ըմբռնումները: 9. Իրավունքի և օրենքի ընդանրությունները ու տարբերությունները: 10. Իրավական օրենք: 	<p>Ներկայացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:</p> <p>Ներկայացվում է դասախոսություն:</p> <p>Ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:</p>

Թեմա 2	
Իրավունքի գոյաբանություն : Իրավունքի արժեքաբանություն	
(2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն

<ol style="list-style-type: none"> 1. Մարդը որպես իրավական էակ: 2. Իրավունքի կեցությունը: 3. Իրավունքի գոյության ձևերը: 4. Իրավունքի արժեքաբանության ընդհանուր բնութագիրը: 5. Բնաիրավական արժեքաբանություն: 6. 3. Լիբերտար-իրավական արժեքաբանություն: 	<p>Անցկացվում է դասախոսություն:</p> <p>Ինքնուրույն աշխատանք: Սովորողներն ուսումնասիրում են թեմային առնչվող գրականությունը:</p> <p>Անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով առանցքային հարցերի վրա:</p>
-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

<p>Թեմա 3</p> <p>Իրավական իմացաբանություն: Իրավական պետության փիլիսոփայական իմաստավորումը</p> <p>(2 ժամ դասախոսություն)</p>	
<p>Թեմայի հարցեր</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>
<ol style="list-style-type: none"> 1. Իրավագիտակցությունը և նրա ճանաչողության հնարավորության հարցը տարբեր փիլիսոփայական ուղղություններում: 2. Լեգիզմի իմացաբանությունը: 3. Իրավունքը սոցիալական նորմերի համակարգում իրավական պետության մեջ 4. Իրավունք և բարոյականություն: 5. Իրավունք և կրոն: 6. Իրավունք և գաղափարախոսություն: 7. Իրավունք և սոցիոլոգիա: 	<p>Անցկացվում է դասախոսություն:</p> <p>Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը, յուրացնում մատուցված նյութը:</p> <p>Սեմինար պարապմունք: Կատարվում է սովորողների գիտելիքների ստուգում՝ հարցման եղանակով:</p>

<p>Թեմա 4</p> <p>Իրավունքի փիլիսոփայության պատմական հարցադրումները</p> <p>(4 ժամ դասախոսություն)</p>	
<p>Թեմայի հարցեր</p>	<p>Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն</p>

<ol style="list-style-type: none"> 1. Անտիկ շրջանի իրավունքի փիլիսոփայություն: Դեմոկրիտի հայացքները: Սոփեստական իրավափիլիսոփայություն: Սոկրատես-պլատոնյան պատկերացումների համակարգը: Արիստոտելի իրավունքի փիլիսոփայությունը: Էպիկուրի և ստոիկների հայացքները: Ցիցերոնի իրավափիլիսոփայական հայացքները: Հռոմեական իրավաբանների հայացքները: 2. Միջնադարյան իրավափիլիսոփայություն: 3. Վերածննդի իրավափիլիսոփայություն: 4. Նոր ժամանակների իրավափիլիսոփայություն: Ֆրանսիական լուսավորիչների իրավափիլիսոփայական հայացքները: Կանտի իրավունքի փիլիսոփայություն: Հեգելի իրավունքի փիլիսոփայություն: 	<p>Անցկացվում է դասախոսություն:</p> <p>Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են գրականությանը:</p> <p>Մեմինար պարապմունք, որի ընթացքում սովորողները ներկայացնում են թեման, ինչպես նաև կազմակերպվում է խմբային քննարկում:</p>
--------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------	-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

Թեմա 5 Իրավունքի փիլիսոփայության 20-րդ դարի հիմնական ուղղությունները (2 ժամ դասախոսություն)	
Թեմայի հարցեր	Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն
<ol style="list-style-type: none"> 1. Նորկանտական իրավափիլիսոփայություն: Շտամլերի հայացքները: Ռադբրուխի իրավունքի փիլիսոփայությունը: 2. Նորհեգելականություն: Կրոչեյի իրավափիլիսոփայական պատկերացումները: Լարենցի նորհեգելական հայացքները: 3. Կելզենի ուսմունքը մաքուր իրավունքի մասին: 4. Վերածնված բնական իրավունքի տեսությունը: 5. Էկզիստենցիալ իրավափիլիսոփայություն /Հայդեգեր, Յասպերս, Մարտր/: 6. Մարչիչի գոյաբանական կոնցեպցիան իրավունքի մասին: 7. Հարտի նեոպոզիտիվիստական իրավունքի կոնցեպցիան : 8. Իրավունքի իմացաբանական- քննադատական տեսությունը: 	<p>Անցկացվում է դասախոսություն:</p> <p>Ինքնուրույն աշխատանք. ուսանողները ծանոթանում են անհրաժեշտ նյութերին, և դրանց վերլուծության արդյունքները ներկայացվում են դասախոսին:</p> <p>Մեմինար պարապմունք: Սովորողների հարցման, ինչպես նաև խմբային քննարկման միջոցով կատարվում է դասավանդված նյութի ամփոփում, պարզվում է դրա յուրացման աստիճանը:</p>